իմո, ի հայրապետութեանն տէր Յոհաննիսի: Ով զայս խափանէ և Բերդաձորո սահման կամ ի վիճակն ձեռն արկանէ կամ զրկէ, :ՅԺԸ: (318) հայրապետացն նզոված եղիցի. ամէն:

Ծանոթ. *Հրատարակիչը* կատապանաւ-ի *փոխարեն ունի* վատապանաւ, *ուղղում ենք մենք։*

*Հրատ. Խ[աչիկ] վ[արդապետ], «Արարատ», 1896, էջ 81։*

***383. ՎԱՐԴԱՆԼՈՒ ԳՅՈՒՂԱՏԵՂ,*** *եկեղեցու մուտքի բարավորի վրա, 8 տող.*

Ի թվիս :ՈԿԴ: (1215) էր. ի վերջին և ի նվաղիլ ժամանակիս,| ես Հասան դուստր (?) մեծին Գրիգորոյ, ամուսին Տաղուանայ| իշխանի, շինեցի զեկեղեցիս ի փրկութիւն հ⌜ոգւոյ⌝| և առն իմո: Առաջնոր⌜դ⌝ լինի զաւա(?) զեկ⌜եղ⌝եցին| առն իմոյ արասցեն. էթէ ոք յիմ|ոց կամ յաւտարաց խափանել ջ|անայ մեր մեղացն պարտակ|ան է. կատարիչք աւրհ⌞նին⌟ յԱ.

*Հրատ. Տէր-Մովսեսեան, Ազգ. հանդ.*, XXV, 78—79:

## 27. ԲԵՐԴԱՁՈՐԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԿԱՄ ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔ

*Վաղուհաս գյուղից մոտ 10 կմ հեռու, Լաքան կոչված վայրում, ձորի եզրի բարձր լանջին է գտնվում այս գրեթե անհայտ և անշուք վանքը։ Այն բաղկացած է թաղածածկ փոքր եկեղեցուց և գավթից։ Վերջինիս հարավային և հյուսիսային պատերը անսովոր հաստ են և նրանց մեջ բացվող խորշերն ավանդատան տեսք ունեն։ Գավթին հարավից կից է մի փոքր մատուռ, որի շուրջը, հատկապես հյուսիսում և արևմուտքում՝ խուցերի և այլ շենքերի ավերակներն են տարածվում։*

*Վանական բոլոր այս շենքերը կառուցված են ճեղքված քարերով, իսկ պատերի արձանագրությունները փորագրված են ագուցված սալաքարերի վրա։*

*Այս հուշարձանը տեղագիր հեղինակները թռուցիկ կերպով են հիշատակել[1] ըստ երևույթին ոչ ոք չի տեսել այն, բացի Խաչիկ վարդապետից, որը հրատարակել է մի արձանագրություն և նշում է, որ կան նաև ուրիշները[2]։*

*Հուշարձանի արձանագրությունները, ինչպես նաև Սակո իշխանի տապանաքարը ապացուցում են, որ Վախթանգյան իշխանական տան Սակոյան ճյուղի տիրույթը եղել է այս վայրում[3]։*

*Ցավոք, մեր լուսանկարներն անհաջող են ստացվել, որովհետև հուշարձանի ներսը շատ մութ է, իսկ դրսի՝ հյուսիսային պատը, ուր գրված են արձանագրությունների մեծ մասը, բացի վատ լուսավորվելուց և մամռապատ լինելուց, ծածկված է մեծ ծառերի ճյուղերով։*

*Մեր ժողովածուն այս հուշարձանից պարունակում է 18 արձանագրություն, որոնցից 17-ը հրատարակվում են առաջին անգամ։*

***384. ԵԿԵՂԵՑՈՒ*** *հյուսիսային պատի արևելյան վերին մասում, արտաքուստ, 16 տող.*



[1] Բարխուդարեանց, *Արցախ, էջ 193։*

[2] *«Արարատ», 1898թ., էջ 81։*

[3] *Սակոաբերդ հիշատակվում է Արարատի շրջանի Մանուկ (այժմ ավերակ) գյուղի մի խաչքարի* XIII *դ. կեսերի արձանագրության մեջ* (խմբ)։

ԹՒԻՆ :ՈՀԳ: (1224) ԷՐ. ԵՍ ՍԱ|ԿՌ, ՈՐԴԻ ՎԱԽՏԱՆԳ|Ա, ԵՂԲՍՑՐ ՀԱՍԱՆԱ ՇԻՆ ԵՑԻ ԶԵԿԵՂԵՑԻՍ ԵՒ Ե|ՏՈՒ ԶՈՐԴԻ ԻՄ ԶԳՐԻԳՈՐ|Ս ՍՊԱՍԱՒՈՐ. ԵՒ ԶԻՄ ԱՐԿ|ԱԾ ՍՑԳԻՆ Ի ՃԱՔ ԻՒՐ ԿԱՏ|ԱՊԱՆՈՎՆ ԻՄ ՀՈԳՈՑՍ: Ո|Վ ԶԱՑՆ ԽԱՓԱՆԷ ՑԱՑ Ի| ՀԱՒՐԷ ԵՒ ՑՈՐԴՈ ԵՒ Ի ՍԲ. ՀՈԳ|ՈՑՆ ԵՒ :ՑԺԸ: (318) ՀԱՑՐԱՊԵՏ|ԱՑՆ ԱՆԻԾԵԱԼ ԵՂԻՑԻ ԵՒ Ի|Մ ՑԱՆՑԱՆԱՑՆ ՊԱՐՏԱ|ԿԱՆ. ՈՐ Ի ՏԱՐՈՒՄՆ :Լ: (30) ԱՒ|ՐԷՆ ԺԱՄՈ ՊԱՐՏԱԿԱ|Ն ԵՂԻՑԻ ԱՌ ԱԾ. ԱՄԷՆ:

***385. ԵԿԵՂԵՑՈՒ** հարավային պատին, իրար միացրած երկու քարերի վրա, երկայուն, ներքուստ, 13 տող.*

ԹՎՉԸ
ԵՍՏՐԳՐԻԳՈՐԱՄԱ
ՐԱՍԱԵՊԻՍԿՈՊՈՍՄ
ԻԱԲԱՆԵՑԱՄԲՈՒՍՏԻ
ՍԵՒԵՏՈՒԶԱՄԷՆՎԱՐ
ԶՍՎԱՐԴՊԵՏԻՆՈՐՇ
ԻՆԵՑԶԵ
ԿԵՂԵՑԻՍԱՌԱՋՆՈ
ՐԴՏԵՂԻՍՏՐԳՐԻԳՈՐ
ԷՍԵՒԱԼՄԻԱԲԱՆՔՍԿ
ԱՐԳԵՑԻՆԻՆՁԻՏԱՐՈ
ՋՆ:Գ:ԺԱՄԱՆԽԱՓԱՆՈՎ
ՋԱՌՆԷԿԱՊԱԾԷՅԱՑ:

ԹՎ⌊ԻՆ⌋ :ՉԸ: (1259)|. ԵՍ ՏՐ. ԴՐԻԳՈՐ, ԱՄԱ|ՐԱՍԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ Մ|ԻԱԲԱՆԵՑԱ ՍԲ. Ո⌊Ի⌋ԽՏԻ|Ս ԵՒ ԵՏՈՒ ԶԱՄԷՆ ՎԱՐ|ԶՍ ՎԱՐԴՊԵՏԻՆ, ՈՐ ՇԻ|ՆԵՑ ԶԵ|ԿԵՂՑԻՍ. ԱՌԱՋՆՈ|ՐԴ ՏԵՂԻՍ ՏՐ. ԳՐԻԳՈՐ|ԷՍ ԵՒ Ա⌊Ց⌋Լ ՄԻԱԲԱՆՔՍ ԿԱՐԳԵՑԻՆ ԻՆՁ Ի ՏԱՐՈ|ՋՆ :Գ: ԺԱՄ ԱՆԽԱՓԱՆ. ՈՎ| ԶԱՌՆԷ ԿԱՊԱԾ Է ՅԱՑ:

*Ծանոթ. Շինության նախորդ և այս արձանագրության մեջ կա 35 տարվա տարբերություն։ Այս երևույթի հավանական բացատրությունն այն է, որ ինչ-որ պատճառով այդ ընթացքում շենքերը խիստ տուժել են այն աստիճան, որ նորոգողներն իրավունք են համարել գործածել շինեցի բառը։ Թվականների մեջ էլ սխալ լինել չի կարող, որովհետև առաջինի մեջ Սակոը իր որդի Գրիգորիսին տալիս է եկեղեցուն սպասավոր, թերևս դեռ պատանի հասակում, իսկ երկրորդի մեջ նույն Գրիգորիսն արդեն վանքի առաջնորդն է։*

***386. ԵԿԵՂԵՑՈՒ** արևմտյան մուտքի կամար ճակատաքարին, արտաքուստ, գմբեթի մեջ. 6 տող.*

ՅԱՆՈՒՆԱԾ
ԵՍՎԱՐԴՊԵՏԵԿԵՂ
ԵՑՈՅՍՄԻԱԲԱՆԵՑԱՅ
ՍԲՈՒԽՏԻՍԵՏՈՒՆԻՏ
ՐՈՋՆՄԻԱՒՐԺԱՄԱԽԱ
ՓԱԿԱՏԱՐԵԼ

ՅԱՆՈՒՆ ԱՑ.|ԵՍ ՎԱՐԴՊԵՏ ԵԿԵՂ|ԵՑՈՅՍ ՄԻԱԲԱՆԵՑԱՅ ՍԲ. ՈՒԽՏԻՍ ԵՒ ԵՏՈՒՆ Ի Տ|ԱՐՈՋՆ ՄԻ ԱՒՐ ԺԱՄ ԱՆԽԱ|ՓԱՆ ԿԱՏԱՐԵԼ:

*Ծանոթ. Համարում ենք նախորդ արձանագրության մեջ հիշատակված վարդպետը, հետևաբար և նույն ժամանակի՝ 1259թ.։*

***387. ԵԿԵՂԵՑՈՒ** հյուսիսային պատին, արտաքուստ, նրա կենտրոնական մասում.*

ՅԻՇԽՈՒԹԵԲԱՐԵՊԱՇՏԱ
ՐՔԱՒՆՋԱԼԱԼԴԱԼԻՆԵՒՈՐԴԻՒՐ
ՈՅԻՒԱՆՈՅԱԹԱԲԱԿԻՆԵՍԳՐԻ
ՍՈՐԴԻՍԱԿՌԻՎԵՐՍՏԻՆՇԻՆԵՑ
ԻԵՂԵՑԻՍԻԹՈՒՍ:ՉԼ:ԵՒՍՊԱՍԱՒ
ՈՐՔՍՈՐԱՊԱՐՏԻՆԻՏԱՐՈՋ:Ա:ԺԱՄ
ՄԵԾՀՆԳՇԱԲԱԹԻՆԻՆՁԳՐԷՍ

ՑԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՐԵՊԱՇՏ Ա|ՐՔԱՒՆ ՋԱԼԱԼ ԴԱՒԼԻՆ ԵՒ ՈՐԴԻ ⌊Ի⌋ՒՐ|ՈՑ ԻՒԱՆՈՑ ԱԹԱԲԱԿԻՆ, ԵՍ ԳՐԻ|⌊ԳՈՐԻ|⌋Ս, ՈՐԴԻ ՍԱԿՌԻ ՎԵՐՍՏԻՆ ՇԻՆԵՑ|Ի| ԶԵԿԵՂԵՑԻՍ Ի ԹՈՒ⌊Ի⌋Ս :ՉԼ: (1281). ԵՒ ՍՊԱՍԱՒ|ՈՐՔ ՍՈՐԱ ՊԱՐՏԻՆ Ի ՏԱՐՈՋ :Ա: ԺԱՄ| ՄԵԾ Հ⌊Ի⌋ՆԳՇԱԲԱԹԻՆ ԻՆՁ ԳՐ⌊ԻԳՈՐ⌋ԷՍ⌊ԻՍ⌋:

*Ծանոթ. Այս երրորդ շինարարական արձանագրությունը պարզապես նորոգումներին է վերաբերում։*

*388. ԵԿԵՂԵՑՈՒ հյուսիսային պատին, արտաքուստ, նախորդի մոտ. 7 տող.*



ՆՈՐԱՑԿՆՈՒՆՔՆ ՍԱՐԳԻ|Ս ՇԱՏ ԱՒԳՆԵՑ ԵՒ ԵՂԵՑ ԳՐ⌊Ի⌋ԳՈՐ⌊Է⌋Ս ԵՒ ԱՅԼ ԵՂԲԱՐՔՍ ՊԱՐ|ՏԻՆՔ Ի ՏԱՐՈՋՆ :Ա: ԱՒՐ ԺԱՄ| ՆՐԱՑ ԼԻՆԻ. ՈՐՉԱՓ ԻՆՔՆ ԿԵ|ՆԴԱՆԻ Է ՍՆՊԱՏՍ ԼԻՆԻ:

*Ծանոթ. Երկրորդ և երրորդ տողերի ԵՂԵՑ ԳՐԷՍ կապակցության երկրորդ բառը, անշուշտ, Գրիգորէս պիտի վերծանել, որն առաջնորդի անունն է, իսկ եղեց բառը պետք է եկեղեցու առաջնորդ հասկանալ։ Բոլոր դեպքերում առկա է ․դեղական բարբառը, ուր եղեցի= եկեղեցի և Գրէս=Գրիգորէսի նվազականը։*

*Ժամանակը որոշվում է Գրիգորիս առաջնորդի անվան հիշատակումով և նվիրատուի՝ շինարարությանը օժանդակելու հանգամանքով (XIII դարի կես)։*

*389. ԵԿԵՂԵՑՈՒ արևմտյան պատի հարավային մասում, ներքուստ, 5 տող.*



ՏՐ. ՄԱՐԳԱՐԷ ՄԻ|ԱԲԱՆԵՑԱ Ս̅Բ̅. ՈՒԽՏԻ|Ս. ԵՍ ՏՐ. ԳՐԻԳՈՐԷՍ| ԷՏՈՒ :Ա: ԺԱՄ ՏԵԱՌ-ԸՆԴ|ԱՌԱՋԻՆ:

*Ծանոթ. XIII դարի կեսեր։*

*390. ԵԿԵՂԵՑՈՒ հյուսիսային պատի արևելյան մասում, արտաքուստ, 7 տող.*



ՃՇՄԱՐԻՏ ՔԱՀ|ԱՆԷՔ ՀՈՎԱՆԷՍ ԵՒ Ն|ԵՐՍԷՍ ՇԱՏ ԸՆԾԷՔ Ե|ՏՈՒՆ ՑԵԿԵՂԵՑԻՍ ⌊Ս⌋ՊԱ|ՍԱ-ՒՈՐՔՍ ⌊ՏՎԱՔ ՑԱՄԷՆ| ՏԱՐԻ :Գ: ԱՒՐ ԺԱՄ. ԿԱ|ՏԱՐԻՉՆ Ա⌊ՒՐՀՆ⌋Ի ՑԱ̅Ց̅:

*Ծանոթ. XIII դարի կեսեր։*

*391. ԵԿԵՂԵՑՈՒ հյուսիսային պատի կենտրոնական մասում, արտաքուստ, 4 տող.*



ԵՍ ՊՈՒԼՈՒԼ ԵՏՈՒ ՋԻՄ ԳՈԳԻՆ ԵՐԿԻՐ|Ն Ի Ս̅Բ̅. ՈՒԽՏՍ ԵՒ ՍՊԱՍԱՒՈՐՔ ՍՈՐԱՑ| ԵՏՈՒՆ Ի ՏԱ-ՐՈՋՆ :Բ: ԺԱՄ. ՈՎ ԽԱՓԱՆ|Է ԻՄ ՄԵՂԱՑՆ ՏԷՐ ⌊Է⌋ ԱՌ⌊ԱՋԻ⌋ Ա̅Ց̅:

*Ծանոթ. XIII դար։*

***392. ԵԿԵՂԵՑՈՒ հյուսիսային պատին, շարունակված է նախորդի չորրորդ տողի կեսից, 5 տող.***



ԵՍ ՎԱՍԱԿ| ՏՎԻ Ի Ս̅Բ. ՈՒԽ˛Տ˛Ս ԸՋ-
ՀԱՑԼ.ԱԽԱՂԱՑՆ Ի ՇԱՏԼՈՑՍԻՆ ԿԱ-
ԼԷՆ Ի ՎԵՐ Ի ՎԵՐԱ [ԳՈՒՐԱԿԱ. ԵՆ
Վ.ԱՍԱԿԱ Վ.ԿԱ|ՈՒԹ̅Բ. ԵՒ ԵՏՈՒՆ Ի
ՏԱՐՈՋ :Բ: ԺԱՄ. ՈՎ ԽԱՓԱՆԷ| Ա̅Ց.
ՆԶՈՎԱԾ Է ԵՒ ԻՄ ՄԵՂ.ԱՑՆ ՏԷՐ Է
ԱՌԱՋԻ Ա̅Ց:

Ծանոթ. XIII դար։

***393. ԵԿԵՂԵՑՈՒ հյուսիսային պատին արտաքուստ, երկու քարի վրա և երկայուն, 13 տող.***



ԵՍ ՀԱՍԱՄ Ս.Դ|ԻՆ ՏՎԻ ՋԿԱՐՈՒԿԱ|Ց ՀՈ-
ԼԻՆ ԵՐԿԻՐՆ ԻՄ Հ|ՈԳՈՑՍ Ի ՍԲ. ՈՒԽՏՍ
ԵՒ Գ|ԱԻՂԱՆՑ ԽՄԱՀԱՏՆ Ի|Մ ՈԳՈ ՈՐԳՈՑՆ.
ՈՎ ԽՍ.|ՓԱՆԷ ԿԱՄ ՑԵՏ ՈՒՆԵԼՈՑ| ՋԱՆԱՑ
ԵՒ Ց|ԱՄԵՆԱՑՆ ՍՐԲՈՑ ՆԶՈՎ|ԱԾ Է ԵՒ ԻՄ
ՄԵՂ.ԱՑՆ ՏԷ|Ր Է ԱՌԱՋԻ Ա̅Ց. ԵՒ ԵՏՈՒ|Ն
ՑԱՄԵՆԱՑՆ ՏԱՐՈՋՆ| :Բ: ԺԱՄ:

Ծանոթ. XIII դար։

***394. ԵԿԵՂԵՑՈՒ հյուսիսային պատի արևելյան վերին մասում, արտաքուստ-12 տող.***



ՍՐԲԱՍ|ԷՐ ՔԱՀԱՆ/ԷՆ ՏԻ|ՄՈԹ ՇԱՏ| ԱՒ-
ԳՆԱԿԱ|Ն ԵՂ.Է ՑՈՑ|Ր ԸՆՁԻՑ Ի|ՄՈՑ. ՏԸ-
ՎԱՔ| Ի ՏԱՐՈՒ|ՄՆ :Ա: ԺԱ|Մ ԱՆԽԱՓ|ԱՆ.
ԿԱՏԱՐ˛ԻՉՔՆ ԱՒՐՀՆԻՆ˛:

Ծանոթ. XIII դար, օժանդակել է շինարարությանը։

***395. ԵԿԵՂԵՑՈՒ արևմտյան պատին, արտաքուստ (դավթի մեջ) նորոգումների ժամանակ ագուցված խաչքարի երկու բեկորների վրա, 6 տող մնացորդներ.***



ԵՍ ՑՈՀԱՆ⌈ԷՍ ԵՒ⌉ ԵՂԲԱՐՔ ԻՄ . . . . .
ԱՄ ԿԱՆԳՆԵ⌈Ց⌉ԱՔ ՁԽԱՁՍ . . . |ԵՂԲԱՑՐ
ՄԵՐ⌈Ո⌉Ց ՍԻՐԵԼՈՑՍ ⌈ՍՐԲ⌉ԱՍԷՐ ՔԱՀ⌈Ա-
ՆԱՑԻ⌉ . . . ԱՆԱՏԻՈ . . ՈՐ ԸՆ⌉|ԹԱՑԱՒ
Ի Ս̅Բ . . . ԱՂԱՒ⌈ԹՍ⌉ . . |ԵՒ ՄՈՒՍԵՑԱ
. . . ԴԻՋԻ . . . . |

Ծանոթ. XIII դար։

**396.** *ԳԱՎԹԻ հյուսիսային պատի արևելյան խորշի կողին ագուցված մեծ և պարզ խաչքարի վրա. 7 տող.*

Թ. | ՈԽ | Ե
ԵՍ | ԽՈՅԱ | ԴԵՂ
ԿԱՆԳՆԵՑԻ
ՋԽԱՉՍՅԻՇ
ԷՔԻՔՍՋԳՐ
ԳՈՐԷՍ
ՍԱՐԳԻՍ

Թ[վ Ի՛Ն] :ՈԽԵ: (1196)|. ԵՍ ԽՈՅԱԴԵՂ| ԿԱՆԳՆԵՑԻ| Զ ԽԱՉՍ ՑԻՇ|ԷՔ Ի ՔՍ. ԶԳՐԻԳՈՐԷՍ|,| ՍԱՐԳԻՍ:

**397.** *ԽԱՉՔԱՐԻ վրա, որն ագուցված է գավթի արևմտյան պատին, մուտքից վեր, պատուհանին որպես կողաքար.*

| | |
|---|---|
| Թ· | ԵՍ |
| ԻՆ∴Ղ | ՎԱՍ |
| ԽԳ:ԷՐ | ԱԿԻԿԿ |
| ՄԻՆՋ | ԱՆԳՆ |
| ՋԱՋ | ԵՑԻ |
| ՈԻՌ | |
| ՀԱՍԱ· | |
| ԱՅԳ | |

Թի[ւ]Ն| :ՉԽԳ: (1294) ԷՐ| ՄԻՆՁ| ՋԱՋ|ՈՒՌ| ՀԱՍԱ[Ն]ԱՑ Գ · · ԵՍ ՎԱՍ|ԱԿԻԿ Կ|ԱՆԳՆ|ԵՑԻ:

**398.** *ԽԱՉՔԱՐԻ վրա, որ ընկած է վանքի բակում, 10 տող.*

ԵՍՍԱԴՈՒՆԿԱ-
ԳՆԵՑԻ
ՉԽԱ
ՉՍՀ
ՈԳՈՅ
ԻՄՈՅ
ԱԾ
ՈՂ
ՈՐՄ
ıԱՄ··ՄԱՅ

ԵՍ ՍԱԴՈՒՆ ԿԱ[Ն]ԳՆԵՑԻ| ԶԽԱ|ՉՍ Հ|ՈԳՈՑ| ԻՄՈՑ.| ԱԾ.| ՈՂ|ՈՐՄ[Ի] ՀԱՄԱ[Մ]ԱՑ:

Տառեր. XIII դար:

*399.* ***ՏԱՊԱՆԱՔԱՐ,*** *մեծ և տափակ, սպիտակավուն քարից. գտնվում է գավթի մեջ, եկեղեցու մուտքի առաջ. երեսին՝ գծերի մեջ 9 տող.*

ԱՅՍ
ԷՀԱՆԳԻՍ
ՏԲԱՐԷՊԱ
ՇՏՊԱՏՐ
ՈՆԻՆՍԱԿՈՒԻ
ՋՈՐՏԱՑԷ
ՔՍՍՄԱՑՁ
ԱՐՔԱՈՒԹ
ԵՐԿՆԻՑԱՄԷՆ

ԱՅՍ| Է ՀԱՆԳԻՍ՛Տ ԲԱՐԷՊԱ/ՇՏ ՊԱՏՐ|ՈՆԻՆ ՍԱԿՈՒԻ|, ՋՈՐ ՏԱՑԷ| ՔՍ. ՍՄԱՑ Ձ|ԱՐՔԱՈՒԹ·] ԵՐԿՆԻՑ. ԱՄԷՆ:

Ծանոթ. *Վանքը շինողի գերեզմանաքարն է. այն շինվել է 1224 թ., հետևաբար նա դրանից հետո պիտի մահացած լինի՝ XIII դարի կեսերին։*

*400.* ***ԵԿԵՂԵՑՈՒ*** *հյուսիսային պատին, 15 տող.*

:ՌՀԸ: (1229) թվ. ես Տիրածայրս Ապարանից բարեպաշտ արքային Ջալալին իմ ընչիւք գնեցի զԳոխին երկիրն և ետու ի սուրբ ուխտս Բերդաձորս. և սպասաւորք սորա ետուն ի տարին :Գ: աւր պատարագք, ուխտան Աստուածածնին՝ մինչև ի Գալուստ Տեառն անխափան կատարել վասն փրկութեան հոգոյ իմոյ. արդ որ զժամ խափանէ իմ յանցանացն տէր է առաջի Քրիստոսի.

Ծանոթ. *Այս արձանագրությունը տեղում չենք տեսել. մեր ձեռքի տակ կա նշված պատի ամբողջ երեսը պատկերող նկար, որի վրա այդ ես չկա, թվում է, որ հրատարակիչը սխալվում է։*

*Հրատ. Խ[աչիկ] Վ[արդապետ], «Արարատ», 1896, էջ 31։*

## 28. ԽԱԴԱՐԻ ԿԱՄ ԽԱԴԱՑԻ ՎԱՆՔ

*Այս նշանավոր վանքը գտնվում է Վաղուհաս գյուղից արևմուտք, մոտ 8 կմ հեռու, ձորերով շրջապատված մի դժվարամատչելի լեռնահարթակի վրա, որի ստորոտով հոսում է Թարթառ գետը։ Վանքի շրջապատը ծածկված է խիտ անտառով։*

*Վանքի անունը արձանագրություններում մեջ և հին աղբյուրներում հիշատակվում է երկու ձևով, բայց գրվել է նաև* Խաթրա վանք *և* Խթրա վանք, *որը ժողովրդական արտասանության հետևանք է։*

*Այս անունը ծագել է, հավանաբար, Թադեոս առաքյալի* Խադ *կամ* Խաթ *աշակերտի անունից, որին նվիրված է վանքը։*

*Վանքի կանգուն և կիսավեր շենքերը ներկայումս հետևյալներն են.*

*Ա.* Եկեղեցի*—չորս սյուների վրա հաստատված կենտրոնագմբեթ մեծ դահլիճ է. արևելքում ունի ավանդատներ. համաձայն № 1 արձանագրության, շինված է 1204 թ., Վախթանգյան տոհմի անդամների կողմից. անմիջական շինողն ու առաջին վանահայրը տեր Ցոհանէսն է։ Այժմ կանգուն է, փլվածքներ ունի միայն գմբեթը։*

*Բ.* Մատուռ*—փոքր բեմ ունեցող շենք է, կից է եկեղեցուն նրա հյուսիս-արևմուտքից. մուտքը եկեղեցու ներսից է, համաձայն № 20 արձանագրության, շինել է սպասալարների քույր Դոփը՝ 1226 թ., կանգուն է։*